



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«17» հուլիսի 2015 թվական N 112-Ա

**ՋՈՆ ՕՀԱՆՆԵՍ ՕՅՈՒՆՋՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ,
2010-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՐԱՎ-
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇՐՋԱՆՅՈՂ ՃԱՆԱՊԱՐՀ ԹԻՎ 15/1 ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ
ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի «ժ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 822-ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետով, 8-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել արտոնություն Ջոն Օհաննես Օյունջյանին սեփականության իրավունքով պատկանող, 2010-2013 թվականների ընթացքում գոյացած Գյումրի քաղաքի Հարավ-Արևելյան շրջանցող ճանապարհ թիվ 15/1 հասցեում գտնվող շինության գույքահարկի և հողի հարկի տույժերի վճարումների նկատմամբ, ազատելով գույքահարկի տույժի՝ 12076 (տասներկու հազար յոթանասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի և հողի հարկի տույժի՝ 24069 (քսանչորս հազար վաթսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի, ընդամենը՝ 36145 (երեսունվեց հազար հարյուր քառասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (14)

Դեմ (0)

Ձեռնպահ(0)

- Ա. Ադամյան
- Գ. Ադամյան
- Ա. Բաղեյան
- Ա. Բաղդամյան
- Մ. Գաբոյան
- Ա. Գրիգորյան
- Վ. Եղիզարյան
- Հ. Խաչատրյան
- Հ. Կարապետյան
- Տ. Հովհաննիսյան
- Վ. Հունանյան
- Ն. Մեսրոպյան
- Ռ. Մխիթարյան
- Մ. Սահակյան

**ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
17 հուլիսի 2015թ.
ք. Գյումրի**

Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն

Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ